ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15.12.2011թ.

N 16 -Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման » մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄԷ՝

Համայնքի վարչական տարածքում 2012 թ. – ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հարնրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինանարության(տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ:

2) սույն կետի « 1 » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

2)1 201 –ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

2)2 501 –ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 12000 դրամ,

2)3 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 1000 դրամ

4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման, վերականգնման , արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարկան նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափեն ընդլայնող այլ կառույցների

(այդ թվում ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ:
2)Բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված, դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1- ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների վերնակառույցների շենքի գաբարիտային չափեն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության, փոփոխություն, ապա , սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000 դրամ:
4. Սույն որոշման 1 –ին , 2 – րդ և 3 – րդ կետերով սահմանված դրույքաչափերը կիրառվում են 0,5 գործակցով:
5.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառ.մետրի տեղական տուրքը սահմանել՝
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ:
բ/ թունդ ալկոհոլային / սպիրտ պարունակող 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ 2500 դրամ:
գ/ այլ արտաքին գովազդի համար ՝ 1500դրամ:
6. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000դրամ:
7. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույտվության համար տեղական տուրք սահմանել 350 դրամ
2) հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 170000 դրամ:
8.Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտներ բաղնիքները /սաունաները/ ,զվարճանքի օբյեկտների՝ ժամը 24.00-ից աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար – 50000դրամ
բ) խաղատների համար՝ 500000 դրամ.
գ) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.
դ) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ.

ե) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:
10. Համայնքային տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ:
11. Համայնքի տարածքում աճուրդ - մրցույթին մասնակցության համար տեղական վճար սահմանել 1000 դրամ:

Քվեարկությանը մասնակցեցին՝

1. Հակոբ Հոփալյան –կողմ,
2. Արմիկ Ղազարյան -կողմ,
3. Երջանիկ Միրզախանյան –կողմ,
4. Վարդուհի Օհանյան - կողմ,
5. Նշան Չաթալյան - կողմ,
6. Տիգրան Տալոյան - կողմ,
7. Վարուժան Շամիրյան – կողմ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. Հ. ԹԵՎՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N 18-Ն

19.12.2011թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ.ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ
2012թ. ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Հավանություն տալ 2011թ. բյուջեյի կատարմանը, քանի որ այն կատարվել է 101,4%-ով:

2. Հաստատել Արարատի մարզի Արալեզ համայնքի 2012թ. բյուջեն:

Քվեարկությանը մասնակցեցին՝

1. Հակոբ Հովսեփյան –կողմ,
2. Արմիկ Ղազարյան -կողմ,
3. Երջանիկ Միրզախանյան –կողմ,
4. Վարդուհի Օհանյան-կողմ,
5. Նշան Չաթալյան-կողմ,
6. Տիգրան Տալոյան-կողմ,
7. Վարուժան Շահինյան –կողմ,

Համայնքի ղեկավար Մ.Հ.Թևոնյան